



«ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ, ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ»
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը մշակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «Ազդարարման բազմակողմանի խթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ՝ Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեկարգության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթղթում արտահայտված է հեղինակի՝ ԻՀԱ դիրքորոշումը, որի համընկնումը ԲԿԳ և ԵՄ դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ

ԵՐԵՎԱՆ,
Սեպտեմբեր, 2023թ.

Բովանդակություն

Հապավումներ	4
I. Ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները	5
1. Միջազգային ստանդարտներ և առաջավոր փորձ	5
Ա. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ստանդարտներ	5
Բ. Եվրոպական Միության ստանդարտներ և անդամ երկրների հատուկ կարգավորումներ	7
Գ. Արևելյան գործընկերության երկրների կարգավորումներ	10
2. ՀՀ օրենսդրություն և պրակտիկա	13
Ա. Դատական/վարչական պաշտպանության իրավունքը և առանձնահատկությունները	14
Բ. Ազդարարի ինքնության/անձնական տվյալների գաղտնիության պաշտպանություն	16
Գ. Անձնական անվտանգության պաշտպանություն	16
Դ. Ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատելը	18
Ե. Աշխատավայրում բոլոր ձևերի վնասակար գործողություններից պաշտպանություն	18
Զ. Ազդարարման վերաբերյալ խորհրդատվություն ստանալու հնարավորություն	20
Է. Անվճար հիմունքներով պետական իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն	20
Ը. (Ֆինանսական) փոխհատուցման տրամադրման հնարավորություն	21
Թ. Վերականգնման հնարավորություն	21
Ճ. Հավելյալ պաշտպանության երաշխիքներ	22
II. Ազդարարների անանունության և անվտանգության երաշխիքները	24
1. Միջազգային ստանդարտներ և առաջավոր փորձ	24
2. ՀՀ օրենսդրություն և պրակտիկա	26
Ա. Անանուն ազդարարումներ ներկայացնելու և դրանք ստուգելու հնարավորություն	26
Բ. Անանուն ազդարարներին պաշտպանության միջոցների տրամադրում	26
Գ. Անանուն ազդարարումների միասնական էլեկտրոնային հարթակին հասանելիություն	27
Դ. Անանուն ազդարարումների միասնական հարթակի ծրագրային ապահովում	28
III. Ազդարարների խրախուսման մեխանիզմները	29
1. Միջազգային ստանդարտներ և առաջավոր փորձ	29
Ա. Դրամական պարգևատրումներ	29
Բ. “Qui tam” հայեցակարգ	34
Գ. Պատվո շքանշաններ/ պատվոգրեր	35

2. ՀՀ օրենսդրություն	35
Եզրակացություն	37
IV. Առաջարկություններ	41
Ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ	41
Ազդարարների անանունության և անվտանգության երաշխիքներ	42
Ազդարարների խրախուսման մեխանիզմներ	42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԼԳ Արևելյան գործընկերություն
- ԱՄՆ Ամերիկայի Միացյալ Նահանգներ
- ԵՄ Եվրոպական միություն
- ՀՀ Հայաստանի Հանրապետություն
- ՄԱԿ Միավորված ազգերի կազմակերպություն
- ՄԻՊ Մարդու իրավունքների պաշտպան
- ՏԻՄ Տեղական ինքնակառավարման մարմիններ
- ՏՀԶԿ Տնտեսական համագործակցության և զարգացման
կազմակերպություն

I. ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

Հակաօրինական արարքների և կոռուպցիոն երևույթների մասին ազդարարման գործընթացը հղի է զգալի խոչընդոտներով, հատկապես՝ այնպիսի պետություններում, որի բնակչությունը հաճախ միմյանց հետ սերտորեն կապված է ազգակցական կամ այլ կապերով, և ազդարարները կարող են ունենալ որոշակի փոխկապակցվածություն հանցագործություն կատարած անձի հետ: Դա կարող է հանգեցնել ազդարարի սոցիալական մեկուսացմանը կամ «գործ տվող» պիտակավորմանը, ընդ որում՝ վնասակար գործողությունները հաճախ ուղղակիորեն կապված են ազդարարի անձնական անվտանգության, սոցիալական բարեկեցության և աշխատանքի հետ, կամ կարող են արտահայտվել իրավական գրոհների տեսքով: Հետևաբար, կոռուպցիայի դեմ պայքարում ազդարարների ներգրավման տեսանկյունից խիստ կարևորվում է ազդարարների պաշտպանությանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրումը: Միջազգային հանրության կողմից մշակվել են ազդարարների պաշտպանությանն ուղղված մեխանիզմների մի շարք ստանդարտներ: Այսպես.

Ա. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի (3) թիվ 1.4-1.6-րդ հենանիշները և վերջինիս մոնիթորինգային ուղեցույցը սահմանում են ազդարարների պաշտպանության մեխանիզմների որոշակի նվազագույն ստանդարտներ:¹ Այսպես.

1.4-րդ հենանիշը վերաբերվում է ազդարարների իրավունքների պաշտպանությանն առնչվող վարույթներում ապացուցման բեռի բաշխման առանձնահատկություններին: Մասնավորապես,

¹ OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, 2023, p. 34-35, available at: <https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf> ; OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Guide, 2023, p. 44-45, available at: <https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf>:

հենանիշը նախատեսում է, որ վարչական կամ դատական վարույթներում, որոնք վերաբերում են ազդարարների իրավունքների պաշտպանությանը, ապացուցման բեռը համապատասխան ընթացակարգը կարգավորող օրենքով դրվում է գործատուի վրա առ այն, որ ազդարարի նկատմամբ ձեռնարկված որևէ միջոցառում կապված չէ ազդարարման հետ:

Հաջորդ՝ 1.5. հենանիշը վերաբերվում է ազդարարների պաշտպանության հիմնական մեխանիզմների նախատեսմանը օրենքով, որը ներառում է հետևյալը.

Ա. Ազդարարի ինքնությունը չբացահայտելը, մասնավորապես՝ ազդարարի ինքնությունը չի կարող բացահայտվել առանց վերջինիս հստակ համաձայնության:

Բ. Ազդարարի անձնական անվտանգության պաշտպանություն, մասնավորապես՝ օրենքով նախատեսվում են անձնական պաշտպանության միջոցներ այն դեպքերում, երբ ազդարարի կյանքին կամ անվտանգությանը վտանգ է սպառնում: Նման պաշտպանության ապահովումը կապված չէ քրեական կամ այլ դատավարության հետ: Վկաների պաշտպանության կամ արդարադատության իրականացման հարցում համագործակցության արդյունքում պաշտպանության դրույթների դեպքում օրենքով հստակ սահմանվում է, որ նման պաշտպանության միջոցները բացահայտորեն տարածվում են այն ազդարարների վրա, ովքեր չունեն վկայի կարգավիճակ կամ այլ կարգավիճակ քրեական կամ այլ դատավարության ընթացքում:

Գ. Ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատելը, մասնավորապես՝ օրենքով սահմանված է, որ ազդարարը չի կարող ենթարկվել քրեական, քաղաքացիական, վարչական կամ աշխատանքային պատասխանատվության ազդարարում ներկայացնելու համար, եթե ազդարարման առարկա հանդիսացող տեղեկատվությունը ձեռք չի բերվել վերջինիս կողմից՝ քրեական հանցագործության կատարման արդյունքում:

Դ. Պաշտպանություն աշխատավայրում վնասակար գործողությունների բոլոր ձևերից (ուղղակի կամ անուղղակի, գործողության կամ անգործության միջոցով), մասնավորապես՝ օրենքով արգելված է գործատուին կամ գործատուի անունից գործող կամ գործատուի համար գործող անձանց ցանկացած սպառնալիքներից կամ գործողություններից, որոնք վնաս են հասցնում ազդարարին աշխատավայրում, քանի որ նա ներկայացրել է ազդարարում:

Հաջորդ՝ 1.6. հենանիշը վերաբերվում է օրենքով ազդարարների պաշտպանության լրացուցիչ մեխանիզմների նախատեսմանը, որը ներառում է հետևյալը.

Ա. Խորհրդատվություն պաշտպանության վերաբերյալ, մասնավորապես՝ օրենքը նախատեսում է մեխանիզմ(ներ), որոնց միջոցով պոտենցիալ ազդարարը կարող է գաղտնի և անվճար հիմունքներով

ստանալ անհատական խորհրդատվություն՝ օրենքի շրջանակի, ազդարարներին տրամադրվող պաշտպանության և փոխհատուցման միջոցների, ազդարարման ընթացակարգերի և տեսակների վերաբերյալ:

Բ. Անվճար իրավաբանական օգնություն պետության կողմից, մասնավորապես՝ օրենքը նախատեսում է, որ ազդարարները, ովքեր չունեն բավարար ռեսուրսներ կամ ազգային օրենսդրության համաձայն՝ որևէ այլ եղանակով որակվում են պետության կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության համար՝ կարող են պահանջել և օգտվել պետական ֆինանսական աջակցությունից բոլոր դատական գործընթացներում:

Գ. Փոխհատուցում, մասնավորապես՝ օրենքը նախատեսում է, որ ազդարարը, ով աշխատավայրում ենթարկվում է ցանկացած ձևի (բնույթի) վնասակար գործողության, ունի կրած վնասի ֆինանսական փոխհատուցման իրավունք և հասանելիություն:

Դ. Վերականգնում, մասնավորապես՝ օրենքը նախատեսում է այս իրավական միջոցի կիրառումը դատարանում այն դեպքերում, երբ կոռուպցիոն ապօրինությունների մասին ազդարարում ներկայացնելու պատճառով ազդարարն ազատվել է աշխատանքից կամ փոխադրվել է ավելի ցածր/այլ պաշտոնի կամ աշխատավայր, կամ չեղարկվել է թույլտվությունը, լիցենզիան կամ պայմանագիրը:

Բ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) խորհրդարանի կողմից 2019 թվականի ապրիլի 16-ին ընդունված N 2019/1937 հրահանգը² սահմանում է, որ անհատը, ով համապատասխանում է Հրահանգով նախատեսված պաշտպանության պայմաններին, պաշտպանված է վնասակար գործողությունների ցանկացած ձևից, սպառնալիքներից կամ փորձից: Անդամ պետությունները պետք է իրականացնեն անհրաժեշտ միջոցներ այս պաշտպանությունն ապահովելու համար, այդ թվում՝

- Պետք է գործի այն կանխավարկածը, որ տեղի է ունեցել վնասակար գործողություն, և դատական վարույթում ապացուցման բեռը դրվում է կազմակերպության վրա՝ ապացուցելու, որ վերջինիս կողմից վնասակար գործողություններ չեն իրականացվել: Վնասակար գործողության՝

² Office of the European Union, Directive (EU) 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law. Official Journal of the European Union, L 305/17-L 305/40; Chapter VI, available at: <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1937>.

ազդարարման հետ կապվածության պնդման առկայության դեպքում այն անձը, ով ձեռնարկել է վնասակար գործողությունը, պետք է ապացուցի, որ վերջինս իրականում հիմնված է եղել հիմնավորված հիմքերի վրա:

- Պետք է նախատեսված լինեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, այդ թվում՝ միջանկյալ օգնության հնարավորությունը, ինչպես նաև միջոցներ և ամբողջական փոխհատուցում ազդարարին պատճառված ցանկացած վնասի համար:
- Յուրաքանչյուր ձևի համաձայնությունը, որը միտված է ազդարարին իր իրավունքներից և հասանելի միջոցներից զրկելուն կամ դրանք սահմանափակելուն, առջինն է:
- Առևտրային գաղտնիք կազմող փաստերի և տեղեկատվության վերաբերյալ ազդարարումը չպետք է դիտարկվի որպես օրենքով կամ պայմանագրով սահմանված՝ դրանց գաղտնիությունը պահպանելու պարտավորության խախտում:
- Ազդարարմանը խոչընդոտելու կամ վնասակար գործողություններ իրականացնելու, ազդարարի ինքնությունը բացահայտելու կամ ազդարարի նկատմամբ վարույթներ են հարուցելու համար պետք է սահմանված լինեն պատասխանատվության միջոցներ, որոնք պետք է լինեն արդյունավետ, համաչափ և զսպիչ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ բազմաթիվ պետություններ, ինչպիսիք են Կիպրոսը, Դանիան և Ֆրանսիան, քրեական պատասխանատվություն են սահմանել ազդարարմանն առնչվող իրավախախտումների համար, և շատերը տուգանքներ են սահմանել ֆիզիկական անձանց և/կամ ընկերությունների համար խախտումների համար:³
- Ազդարարների համար խորհրդատվության և իրավաբանական աջակցության նորմերի սահմանումը պարտադիր է, ինչպես նաև կարող են սահմանվել ազդարարներին ֆինանսական օգնության և աջակցության այլ միջոցներ, օրինակ՝ հոգեւոցիալական:

Հրահանգը տալիս է «վնասակար գործողության» լայն սահմանում, որը ներառում է.

- աշխատանքի ժամանակավոր դադարեցում (անգլ.՝ suspension), հարկադիր պարապուրդ (անգլ.՝ lay-off), աշխատանքից ազատում (անգլ.՝ dismissal) կամ համարժեք միջոցներ.
- ավելի ցածր պաշտոնի փոխադրում (անգլ.՝ demotion) կամ ազդարարի նկատմամբ առաջխաղացման կիրառումը մերժելը (անգլ.՝ withholding of promotion).
- պարտականությունների փոխանցում, աշխատանքի վայրի փոփոխություն, աշխատավարձի իջեցում կամ աշխատանքային ժամերի փոփոխություն.

³ See, for example, Whistleblowers Protection Act no. 1436 (Lov om beskyttelse af whistleblowere), adopted: June 29, 2021, Article 30, available at: <https://www.retsinformation.dk/eli/ta/2021/1436>.

- վերապատրաստումը մերժելը (անգլ.՝ withholding of training).
- կատարողականի բացասական գնահատական կամ բացասական աշխատանքային բնութագիր.
- ցանկացած կարգապահական ներգործության միջոց, նկատողություն կամ այլ տույժ, ներառյալ՝ ֆինանսական, նշանակելը կամ կիրառելը.
- հարկադրանք, ահաբեկում, ոտնձգություն կամ օստրակիզմ.
- խտրականություն, անբարենպաստ կամ անարդար վերաբերմունք.
- որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը անորոշ ժամկետով կնքված պայմանագրի չվերափոխելը, երբ աշխատողն ունի իրավաչափ ակնկալիքներ, որ իրեն կառաջարկեն մշտական աշխատանք.
- որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը չժարմացնելը (անգլ.՝ renew) կամ վաղաժամկետ դադարեցնելը.
- վնաս պատճառելը, ներառյալ՝ անձի հեղինակությանը, մասնավորապես՝ սոցիալական մեղիայում, կամ ֆինանսական կորուստներ կրելը, ներառյալ՝ բիզնեսի կորուստը և եկամուտների կորուստը.
- կոլեկտիվ (անգլ.՝ sector or industry-wide) ոչ պաշտոնական կամ պաշտոնական համաձայնագրի հիման վրա սև ցուցակում ներառելը, ինչը կարող է հանգեցնել նրան, որ անձը ապագայում աշխատանք չի գտնի տվյալ ոլորտում կամ արդյունաբերության մեջ.
- ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ չեղարկելը.
- լիցենզիան կամ թույլտվությունը չեղարկելը.
- հոգեբուժական կամ բժշկական ուղղորդումները:

ԵՄ հրահանգը կիրարկող անդամ պետությունների ներպետական օրենսդրություններում տեղ գտած կարգավորումների առանձնահատկություններից տեսանկյունից հատուկ ուշադրության են արժանի հետևյալ նորմերը.

- *Մշտականություն* աշխատողներ հանդիսացող ազդարարները ստանում են լրացուցիչ պաշտպանություն վնասակար գործողություններից, եթե նրանք հաղորդում են ներկայացնում լուրջ հակասոցիալական գործունեության մասին: Մասնավորապես, կազմակերպություններից պահանջվում է ստանալ ազդարարների պաշտպանությամբ զբաղվող կենտրոնական մարմնի՝ Ազդարարների պաշտպանության գրասենյակի հաստատումը՝ նախքան ազդարարի նկատմամբ այնպիսի աշխատանքային ակտի ընդունման կապակցությամբ, որը կարող է որակվել որպես վնասակար գործողություն (օրինակ՝ աշխատանքից ազատելը կամ պաշտոնի

իջեցումը): Հաստատման հարցումը պետք է ներառի օրենքով նախատեսված տեղեկությունները:⁴

Բացի այդ, նախատեսված է ազդարարներին հոգեւոյնապահական աջակցության տրամադրում: Այդ նպատակով Գրասենյակի կողմից իրականացվում են հոգեւոյնապահական աջակցության ծրագրեր, որոնք ներառում են հանդիպումների կազմակերպում և ֆինանսավորում կարիերայի ուղղորդման մասնագետների և հոգեթերապևտի հետ:⁵

- *Ռումինիայում*, եթե կազմակերպությունը, ի վերջո, որոշում է կազմակերպել կարգապահական ժողով՝ ազդարարի դեմ պատասխանատվության միջոց կիրառելու նպատակով (ազդարարման արդյունքում), ազդարարը կարող է պահանջել, որ կազմակերպությունը հրավիրի մամուլի, արհմիության կամ մասնագիտական ասոցիացիայի ներկայացուցչին, կամ աշխատակիցների ներկայացուցչին: Ազդարարի խնդրանքով կազմակերպությունը պետք է հանդիպման անցկացման մասին հայտարարի իր կայքում՝ հանդիպման կայացումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ: Եթե կազմակերպությունը կարգապահական պատասխանատվություն է ձեռնարկում առանց այդ պահանջները կատարելու, ապա ազդարարի դեմ կայացված ակտն առաջին է:⁶
- *Նիդեռլանդներում* ևս նախատեսված է ազդարարներին հոգեւոյնապահական աջակցության տրամադրումը, և այդ նպատակով ազդարարման հարցերով իրավասու մարմինն ազդարարներին ուղղորդում է դեպի գործակալություններ կամ կազմակերպություններ, որոնք կարող են տրամադրել հոգեւոյնապահական աջակցություն:⁷

Գ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

⁴ Act No. 54/2019 on the Protection of Whistleblowers of Anti-Social Activities and on Amendments to Certain Acts, Article 1, clauses 12, 13, adopted: January 30, 2019, available at: <https://www.zakonypreludi.sk/zz/2019-54>.

⁵ Whistleblower Protection Office of Slovakia, official website: <https://www.oznamovatelia.sk/en/chcem-oznamit/>; The Whistleblower Protection Office 2022 Annual Report, available at: <https://www.oznamovatelia.sk/wp-content/uploads/2023/06/annual-report-2022.pdf>.

⁶ Law no. 361/2022 on the protection of whistleblowers in the public interest, adopted: December 13, 2022, Article 26, available at: <https://senat.ro/legis/PDF/2022/22L175PX.PDF>.

⁷ Dutch Whistleblowers Authority, official website: <https://www.huisvoorklokkenuidiers.nl/english>, 2021 Annual Report, available at: <https://www.huisvoorklokkenuidiers.nl/Publicaties/jaarverslagen/2022/03/15/annual-report-dwa-2021>.

Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱԳ) երկրներից հատուկ ուշադրության են արժանի Ուկրաինայի կարգավորումները, որոնցով նախատեսված են պաշտպանության տարբեր երաշխիքներ, և դրանց մեծ մասը կիրառվում է գործնականում: Այսպես.

- Ազդարարների գործերով ապացուցման բեռը գործատուի վրա դնելն ունի պատշաճ իրավական հիմքեր Քաղաքացիական դատավարության օրենսգրքում (81-րդ հոդվածի 3-րդ մաս) և Վարչական դատավարության օրենսգրքում (77-րդ հոդվածի 2-րդ մաս), այդ թվում՝ ներառելով նաև այն իրավիճակները, երբ վնասակար գործողությունն ուղղված է ազդարարի հարազատների դեմ: Բացի այդ, Ուկրաինայի ազդարարման հարցերով իրավասու կենտրոնական մարմինը՝ Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունն առանցքային դեր է խաղում դատարանների կողմից սույն կարգավորումների մասին իրազեկվածության ապահովման գործում՝ դատարանների կողմից «համահունչ» մեկնաբանման գործընթացը դարձնելով ավելի դյուրին:
- Օրենքով նախատեսված ազդարարի ինքնության պաշտպանության մեխանիզմները համապատասխանում են միջազգային չափանիշներին:
- Օրենքով նախատեսված են ազդարարի անձնական անվտանգության պաշտպանության մեխանիզմներ, մասնավորապես՝ ազդարարի կյանքին, առողջությանը կամ սեփականությանը վտանգ սպառնալու դեպքում իրավապահ կարմինները կարող են կիրառել «Քրեական վարչություն մասնակցող անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի դրույթները: Սակայն, ինչպես պարզ է դառնում անվանումից, դրանք տարածվում են միայն այն ազդարարների շրջանակի վրա, որոնք ազդարարում են քրեական հանցագործությունների մասին: Հետևաբար, պաշտպանության շրջանակը չի ներառում այն ազդարարներին, որոնք ազդարարում են վարչական կամ կարգապահական կոռուպցիոն իրավախախտման վերաբերյալ:
- Օրենքով նախատեսված են ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատելու պաշտպանության միջոցներ, մասնավորապես՝ ազդարարը կարող է ազատվել ազդարարման հետ կապված քրեական, քաղաքացիական, աշխատանքային կամ այլ պատասխանատվությունից («Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 538-րդ հոդված), որը ներառում է աշխատանքային կամ այլ պայմանագրերում գաղտնիության (անգլ.՝ confidentiality) դրույթների չկիրառումը: Ազդարարներն ազատվում են պատասխանատվությունից ազդարարում ներկայացնելու հետևանքով պատճառված ցանկացած գույքային կամ բարոյական վնասից, բացառությամբ՝ այն դեպքերի, երբ ազդարարումը գիտակցաբար կեղծ կամ ոչ ճշգրիտ է, որը կարող է ենթակա լինել հերքման

(Քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդված): Բացի այդ, ազդարարները պատասխանատվություն չեն կրում գաղտնիության (անգլ.՝ privacy) խախտման վերաբերյալ քրեական հանցագործությունների (Քրեական օրենսգրքի 182-րդ հոդված) և առևտրային կամ բանկային գաղտնիքներ կազմող տեղեկությունների գաղտնիությունը խախտելու համար (Քրեական օրենսգրքի 231-րդ հոդված):

- Օրենքով նախատեսված են աշխատավայրում վնասակար գործողություններից պաշտպանության մեխանիզմներ, մասնավորապես՝ օրենքով արգելված է ազդարարի վերադասի կամ գործատուի կողմից ցանկացած վնասակար գործողություն, որը կապված է ազդարարման հետ, ոչ միայն ազդարարի, այլև՝ վերջինիս ընտանիքի անդամների նկատմամբ («Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 534-րդ հոդված): Բացի այդ, օրենքով, մասնավորապես՝ Քաղաքացիական և Վարչական դատավարության օրենսգրքերով, նախատեսված է նաև ազդարարի նկատմամբ ժամանակավոր պաշտպանության (անգլ.՝ provisional protection) մեխանիզմների կիրառում, օրինակ՝ գործատուի որոշման կամ ակտի կասեցումը մինչ գործի վարույթի ավարտը: Ազդարարը կարող է ժամանակավոր պաշտպանություն պահանջել ազդարարումը ներկայացնելու պահից՝ իր դեմ ձեռնարկված վնասակար կամ այլ անբարենպաստ գործողությունների դեպքում («Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 53-րդ հոդված, 3-րդ մաս):
- Օրենքով նախատեսված ազդարարի՝ պաշտպանության վերաբերյալ խորհրդատվության, պետության կողմից անվճար իրավաբանական օգնության, փոխհատուցման և վերականգնման լրացուցիչ պաշտպանության մեխանիզմները համապատասխանում են միջազգային չափանիշներին: Ավելին, Ուկրաինայում ազդարարման հարցերով իրավասու կենտրոնական մարմինը՝ Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության իրավաբանական օգնության ռեժիմը ներառում է ազդարարների ներկայացումը դատարանում:
- Օրենքով նախատեսված են նաև ազդարարին բժշկական և հոգեբանական օգնության տրամադրման լրացուցիչ մեխանիզմներ, սակայն՝ ազդարարի՝ օրենքով երաշխավորված հոգեբանական օգնության իրավունքը («Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 533-րդ հոդվածի 11-րդ մաս) ունի հոչակագրային բնույթ, քանի որ գործնականում որևէ մարմին կամ կազմակերպությանը վերապահված չէ այն տրամադրելու իրավասություն: Միննույն ժամանակ, 2023 թվականի մարտի 4-ին Ուկրաինայի նախարարների կաբինետի կողմից ընդունված «Պետական հակակոռուպցիոն ծրագրով» նախատեսվում է 2024 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին ներդնել ազդարարներին հոգեբանական օգնության տրամադրման

համակարգ: ⁸ Բժշկական օգնությունը հստակորեն նախատեսված չէ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» կամ այլ առաջնային օրենքով, և, հետևաբար, բացակայում է հնարավորությունը՝ պահանջելու փոխհատուցում ազդարարին տրամադրված բժշկական օգնության համար: Բժշկական օգնությունը սահմանվում է որպես անհատական իրավունք (Քաղաքացիական օրենսգրքի 283-րդ հոդված) և, հետևաբար, խախտման դեպքում, փոխհատուցումը կարող է պահանջվել ընդհանուր փոխհատուցման ռեժիմով (Քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդված):

- Իրավակիրառ պրակտիկայի 2020 թվականի վիճակագրության տվյալները հետևյալն են. դատարանում առկա են մի շարք վնասակար գործողությունների գործեր, և թվով 12 գործով վճիռ է կայացվել հոգուտ ազդարարի: 2020 թվականին Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը տրամադրել է 49 խորհրդատվություն, աջակցել ազդարարներին՝ մասնակցելով 12 դատական լսումների և կայացրել է 5 հրաման՝ վերականգնելու ազդարարի իրավունքները վնասակար գործողությունների դեպքում:⁹

2. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլուխը նվիրված է ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանությանը:¹⁰ Մասնավորապես, օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազդարարն ունի պաշտպանության իրավունք՝ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, ինչպես նաև՝ ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր եռությամբ կիրառելի է դրա նկատմամբ: Բացի այդ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր պայմանագիր կամ պայմանագրի դրույթ, որը

⁸ Պետական հակակոռուպցիոն ծրագիրը փաստաթուղթ է, որը սահմանում է կոնկրետ միջոցառումների համակարգ, որոնք պարտադիր են իրականացման համար և ուղղված են 2021-2025 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը: Transparency International (Ukraine), “Cabinet of Ministers Adopts State Anti-Corruption Program: Details”, March 27, 2023, available at: <https://ti-ukraine.org/en/news/cabinet-of-ministers-adopts-state-anti-corruption-program-details/>:

⁹ OECD (2022), Anti-Corruption Reforms in Ukraine: Pilot 5th Round of Monitoring Under the OECD Istanbul Anti-Corruption Action Plan, pp. 53-56, 62; available at: <https://doi.org/10.1787/b1901b8c-en>.

¹⁰ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131>:

միտված է անձին ազդարարման կամ ազդարարի պաշտպանության իրավունքից զրկելուն կամ այն սահմանափակելուն, առաջինը է, ինչը համահունչ է ԵՄ հրահանգով նախատեսված կարգավորումներին: Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծում նշվել է, որ ազդարարների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների արդյունավետությունը, որի կապակցությամբ գործողությունների ծրագրի նախագծի թիվ 2.23 գործողության ներքո առաջարկվում է բարձրացնել ազդարարների տրվող պաշտպանության երաշխիքների արդյունավետությունը¹¹:

Այժմ քննարկենք գործող պաշտպանության մեխանիզմներից յուրաքանչյուրը:

Ա. ԴԱՏԱԿԱՆ/ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի «Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանությունը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ազդարարը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ ազդարարի հետ փոխկապակցված անձը, որի դեմ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով ձեռնարկվել է վնասակար գործողություն, ևս ունի դատական պաշտպանության իրավունք: Հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այս հոդվածի տեսանկյունից հատկապես կարևորվում է 2022 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հոդվածի 4-րդ մասի ներքո հետևյալ դրույթի սահմանումը՝ *«Ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը»*: Մինևույն ժամանակ, այս դրույթը վերաբերվում է միայն դատական վարույթներին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն հոդվածը, ինչպես բխում է իր վերնագրից, վերաբերվում է դատական պաշտպանությանը:

¹¹ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, շրջանառվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, քննարկվել է 13.07.2023 - 21.08.2023թթ.-ին, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/5986>:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, *«եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով»*:¹² Ընդգծված դրույթը, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի փոփոխված 12-րդ հոդվածի հետ միասին» ազդարարների պաշտպանության վեճերում կղնի ապացուցման բեռը գործատուի վրա: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի ընդհանուր կանոնն այն է, որ ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը:¹³

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Բացի այդ, նշյալ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթում գործում է հավաստիության կանխավարկածը, այն է՝ *«Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել»*:¹⁴

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ թեև գրասենյակային վերլուծության արդյունքում հանգած հետևությունների համաձայն՝ առ այսօր սույն դրույթների վերաբերյալ դատական պրակտիկան բացակայում է, այնուամենայնիվ, օրենքի համապատասխանության տեսանկյունից ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է ազդարարների դատական և վարչական վարույթների կապակցությամբ ապացուցման բեռի առնչությամբ սահմանված առանձնահատկությունների նկատմամբ կիրառվող միջազգային պահանջներին: Բացի այդ, առկա է ազդարարման ոլորտում իրազեկման գործառնություններ իրականացվող կենտրոնական մարմնի կողմից քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն՝ ուղղված դատարանների կողմից սույն կարգավորումների մասին իրազեկվածության բարձրացմանը:

¹² ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, ընդունված՝ 2018 թվականի փետրվարի 9-ին, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180733>:

¹³ ՀՀ վարչական դատավարության օրենսգրք, ընդունված՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180732>:

¹⁴ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2004 թվականի փետրվարի 18-ին, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165294>:

Բ. ԱԶԳԱՐԱՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ/ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության իրավունք: Օրենքով ազդարարի ինքնության պաշտպանությունը երաշխավորվում է առանց ազդարարի համաձայնություն անձնական տվյալների հրապարակման արգելքով, որն ամրապնդվում է ազդարարի անձնական տվյալները մշակելու ընթացքում գաղտնիությունը չապահովելու համար նախատեսված վարչական ¹⁵ և ազդարարի տվյալների ապօրինի հրապարակման համար քրեական ¹⁶ պատասխանատվության միջոցներով: Գրասենյակային վերլուծության (անգլ.՝ desk research) արդյունքում տվյալներ չգտնվեցին առ այն, որ իրավակիրառ պրակտիկայում տեղի են ունեցել ազդարարի տվյալների գաղտնիության հրապարակման խախտումներ, որոնք չեն քննվել և ենթարկվել պատասխանատվության: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ ազդարարի ինքնության/անձնական տվյալների գաղտնիության պաշտպանության կարգավորումները համապատասխանում են միջազգային չափանիշներին:

Գ. ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել «*իրավասու մարմին*», որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և կայացնել համապատասխան որոշում: Նշված որոշումն ուղարկվում է Ոստիկանություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանությունն ապահովելու համար: Ազդարարին հատուկ պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման իրավասու պետական մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով սահմանված կարգով այնքանով, որքանով իր էությամբ (*mutatis mutandis*) կիրառելի է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածը սահմանում է հատուկ պաշտպանության հետևյալ միջոցները՝

¹⁵ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, ընդունված՝ 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, հոդված՝ 41⁵, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185524>:

¹⁶ ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված՝ 2021 թվականի մայիսի 5-ին, հոդված՝ 502, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=181303>:

- 1) պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը.
- 2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը.
- 3) պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը.
- 4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը.
- 5) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը.

6) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը.

7) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը.

8) դատական նիստերի դահլիճից հեռացումը կամ դռնփակ դատական նիստի անցկացումը.

9) դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1. մասը սահմանում է, որ ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու գրավոր խնդրանքով «*վարույթն իրականացնող մարմին*» կարող է դիմել Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ ՄԻՊ)՝ իր նախաձեռնությամբ կամ այդ անձի դիմումի հիման վրա»:¹⁷ «*վարույթն իրականացնող մարմին*» եզրույթը վկայում է այն մասին, որ հատուկ պաշտպանությունը, առնվազն ՄԻՊ-ի դիմումի հիման վրա, սահմանափակվում է այն իրավիճակներով, երբ ազդարարումը վերաբերվում է հանցագործությանը, և առկա է ընթացիկ քրեական վարույթ:

Բացի այդ, մտահոգությունների տեղիք է տալիս «*իրավասու մարմին*» եզրույթի լայն սահմանումը, որը ներառում է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման (այսուհետ՝ ՏԻՄ) մարմիններին և հանրային նշանակության կազմակերպություններին, և միևնույն սահմանումը վերաբերվում է և արտաքին ազդարարումներ ստացող մարմիններին, և՛ ազդարարների հատուկ պաշտպանության համար դիմումներ ստացող մարմիններին, որի արդյունքում պարզ չէ, թե կոնկրետ որ մարմինն պետք է դիմի ազդարարը՝ արտաքին ազդարարումներ և հատուկ պաշտպանության համար դիմումներ ներկայացնելու համար:¹⁸

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ ազդարարի անվտանգության պաշտպանության ներպետական կարգավորումները ոչ բավականաչափ հստակ և միանշանակ լինելու պատճառով չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին, այդ թվում՝ ՏՀԶԿ հենանիշներին: Միևնույն

¹⁷ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ընդունված՝ 2021 թվականի հունիսի 30-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180734>:

¹⁸ «Իրավասու մարմին» եզրույթի խիստ ընդհանրական բնույթի վերաբերյալ ավելի մանրամասն ներկայացված է կից ներկայացված՝ «Ազդարարման տեսակների կատարելագործում» վերլուծությամբ

Ժամանակ, գրասենյակային վերլուծության արդյունքում չգտնվեցին գործնականում ազդարարներին հատուկ պաշտպանության միջոցների տրամադրման վերաբերյալ տվյալներ:

Դ. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ազդարարը չի կարող ենթարկվել որևիցե պատասխանատվության ազդարարման համար, բացառությամբ, եթե նրա արարքը պարունակում է հանցակազմ: Վերոնշյալից բխում է, որ ազդարարը ազատվում է պատասխանատվությունից միայն այն պարագայում, երբ ազդարարման գործողությունը չի հանդիսանում քրեական հանցագործություն: Նման պայմանը խնդրահարույց է, քանի որ այն բացառում է ազդարարման պաշտպանությունը, օրինակ, երբ ազդարարումը ներառում է գաղտնի տեղեկատվության արգելված օգտագործում: Սա լայն բացառություն է, որը չի սահմանափակվում միայն այն դեպքերով, երբ ազդարարը հանցագործություն է կատարել՝ ազդարարման առարկա կազմող տեղեկատվությունը ստանալու համար, օրինակ՝ ազդարարը կարող է գաղտնի տեղեկատվությունը ստանալ օրինական կերպով, սակայն վերջինիս օգտագործումը ազդարարման նպատակով կարող է նախատեսել քրեական պատասխանատվություն:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ ներպետական կարգավորումները չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին, այդ թվում՝ ՏՀԶԿ հենանիշներին, քանի որ անհրաժեշտ է հստակ սահմանել, որ ազդարարներն ազատվում են պատասխանատվությունից գաղտնիության խախտման վերաբերյալ քրեական հանցագործությունների և առևտրային կամ բանկային գաղտնիքներ կազմող տեղեկությունների գաղտնիությունը և աշխատանքային կամ այլ պայմանագրերում գաղտնիության դրույթները խախտելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է առնվազն պաշտոնական ուղեցույցների մակարդակով սահմանել, որ պատասխանատվությունից ազատումը ներառում է ազդարարման արդյունքում պատճառված ցանկացած գույքային կամ բարոյական վնասից, բացառությամբ՝ սուտ մատնության և զրպարտության դեպքերի:

Ե. ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ազդարարն ունի վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք: Բացի այդ, նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն վնասակար գործողություններից պաշտպանության ենթակա

սուբյեկտների շարքին են դասվում նաև ազդարարի հետ փոխկապակցված անձինք, որոնք օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն ընդգրկում են ազդարարի ամուսնուն, զավակներին, ծնողներին, քույրերին և եղբայրներին, եթե ողջամտորեն հիմնավորում է, որ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով իր դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով օրենսդիրը սովել է «վնասակար գործողություն» եզրույթի բավականաչափ լայն և միաժամանակ չսահմանափակող սահմանում, որը ներառում է «գործողություն կամ անգործություն, որով ազդարարման համար ազդարարին կամ նրա հետ փոխկապակցված անձին հասցվում է վնաս՝

- լուծելով աշխատանքային պայմանագիրը կամ
- նրան ավելի ցածր պաշտոնի փոխադրելով կամ
- նրա հաստիքը կրճատելով կամ
- նրան աշխատանքային առաջադրանքներ չտրամադրելով կամ
- արհեստականորեն հանձնարարականներով կամ առաջադրանքներով ծանրաբեռնելով կամ
- նրա աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտելով
- կամ նրա նկատմամբ իրախուսանքի միջոցների կիրառումը մերժելով կամ
- նրա աշխատավարձը կամ պարգևավճարները կրճատելով կամ
- նրա գույքին վնաս պատճառելով կամ
- նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելով կամ
- նրան պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկելով, որը կվատթարացնի նրա գույքային դրությունը կամ չի արդարացնի գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները կամ
- ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցներ կիրառելով»:

Նույն օրենքի 3.2. հոդվածը սահմանում է, որ ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով համապատասխան մարմինն իր իրավասության շրջանակներում՝

- 1) ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը.
- 2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.
- 3) ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ.

4) իրականացնում է ազդարարի աշխատանքային իրավունքների պաշտպանությունը ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված միջոցներով և կարգով:

5) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ, այդ թվում՝ ազդարարին տեղափոխում է այլ աշխատասենյակ, ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ ազդարարի՝ աշխատավայրում բոլոր ձևերի վնասակար գործողություններից պաշտպանության կարգավորումները համապատասխանում են միջազգային չափանիշներին: Միննույն ժամանակ, գրասենյակային վերլուծության արդյունքում չգտնվեցին տվյալներ ազդարարների նկատմամբ ձեռնարկված վնասակար գործողությունների քննության գործերի վերաբերյալ:

**Զ. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն՝ ազդարարն ունի ՄԻՊ-ից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ ազդարարման վերաբերյալ խորհրդատվության հնարավորություն նախատեսող կարգավորումները համապատասխանում են միջազգային չափանիշներին: Միննույն ժամանակ, գրասենյակային վերլուծության արդյունքում չգտնվեցին տվյալներ ազդարարներին տրամադրված խորհրդատվության քանակի վերաբերյալ: Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն միջազգային պրակայում հայտնի և լայն տարածման միտում ունեցող այնպիսի կարգավորումներ, ինչպիսիք են ազդարարների պաշտպանությամբ զբաղվող կենտրոնական մարմնի կողմից մասնակցությունը ազդարարներին առնչվող դատական վարույթներում՝ անկախ խորհրդականի կարգավիճակով:

**Է. ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ Հանրային պաշտպանի գրասենյակն անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող

հավաստի տվյալներ են ներկայացնում:¹⁹ Նշյալից բխում է, որ ազդարարը ևս կարող է ստանալ անվճար իրավաբանական օգնություն՝ օրենքով նախատեսված ընդհանուր պայմաններով: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ ազդարարներին անվճար հիմունքներով պետական իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն նախատեսող կարգավորումները համապատասխանում են միջազգային չափանիշներին: Միննույն ժամանակ, գրասենյակային վերլուծության արդյունքում չգտնվեցին տվյալներ ազդարարներին Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրված իրավաբանական խորհրդատվության քանակի վերաբերյալ:

Ը. (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ) ՓՈՒՔԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3.1. մասի համաձայն՝ ազդարարն իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս օգտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից: ՀՀ օրենսդրությամբ ազդարարներին առնչվող վնասի փոխհատուցման պահանջ տեսականորեն հնարավոր է ներկայացնել ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով նախատեսված կարգով: Միննույն ժամանակ, միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ՝ հստակ և միանշանակորեն կարգավորման սահմանման պահանջ նախատեսող ստանդարտներին համապատասխանելու տեսանկյունից և երկակի մեկնաբանություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է ազդարարներին պատճառված վնասի համար ֆինանսական փոխհատուցման տրամադրման կարգավորումները հստակ սահմանել «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով՝ հղում կատարելով ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերին: Միննույն ժամանակ, գրասենյակային վերլուծության արդյունքում չգտնվեցին տվյալներ ազդարարներին պատճառված վնասի համար ֆինանսական փոխհատուցման տրամադրման դեպքերի վերաբերյալ:

Թ. ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը հստակ և միանշանակորեն չի նախատեսում ազդարարի աշխատանքի վերականգնման հնարավորությունը, եթե նա ազատվել է աշխատանքից

¹⁹ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175857>

իրավախախտման մասին ազդարարելու պատճառով, իսկ խախտված աշխատանքային իրավունքի վերականգնմանն ուղղված գործող դրույթներն ունեն սահմանափակող բնույթ: Օրինակ, օրենսգրքի 265-րդ հոդվածի 1.1. մասի համաձայն՝ աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են, եթե պարզվում է, որ «աշխատանքի պայմանները փոփոխվել են, կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են առանց օրինական հիմքերի կամ ՀՀ օրենսդրությամբ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ»:²⁰

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատողի կողմից իր իրավունքների պաշտպանության իրականացման միակ հիմքն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3.1. մասով սահմանված վերոնշյալ կարգավորումն է, ապա գործնականում կարող են խնդիրներ առաջանալ ազդարարի խախտված աշխատանքային իրավունքների վերականգնման համար այն դեպքերում, երբ վերջինիս աշխատանքի դադարեցումը ձևական տեսանկյունից իրականացվել է օրենքով սահմանված հիմքերով և կարգով, սակայն իրական շարժառիթ է հանդիսացել վերջինիս նկատմամբ վնասակար գործողությունների իրականացումը: Նշյալից բխում է, որ միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ ստանդարտներին համապատասխանելու տեսանկյունից և երկակի մեկնաբանություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է ազդարարի խախտված աշխատանքային իրավունքների վերականգնման հնարավորությունը սահմանել ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Մինևույն ժամանակ, գրասենյակային վերլուծության արդյունքում չգտնվեցին տվյալներ ազդարարների խախտված իրավունքների վերականգնման դեպքերի վերաբերյալ:

Ժ. ՀԱՎԵԼՅԱԼ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն միջազգային, մասնավորապես՝ ԵՄ պրակտիկայում հայտնի ազդարարների հավելյալ պաշտպանության այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են՝

²⁰ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունված՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185675>:

- ազդարարման արդյունքում ազդարարի նկատմամբ՝ նախքան որպես պոտենցիալ վնասակար գործողություն որակվող աշխատանքային ակտ քննունելը ազդարարների պաշտպանությամբ զբաղվող կենտրոնական մարմնի հաստատումը ստանալու պահանջ նախատեսող կարգավորումներ (Սլովակիա).
- ազդարարման արդյունքում ազդարարի նկատմամբ՝ որպես պոտենցիալ վնասակար գործողություն որակվող պատասխանատվության միջոց կիրառելու նպատակով կարգապահական ժողովի անցկացման հրապարակայնության և թափանցիկության կարգավորումներ, որոնք ներառում են՝ ազդարարի պահանջով ժողովի անցկացման մասին հայտարարության տեղադրում պաշտոնական կայքում՝ ժողովի կայացումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ, ժողովին մամուլի, արհմիության, մասնագիտական ասոցիացիայի կամ աշխատողների ներկայացուցիչներին հրավիրում, իսկ նշյալ պահանջները չպահպանելու դեպքում՝ ազդարարի դեմ կայացված ակտի առոչինչ բնույթի սահմանում (Ռումինիա).
- ազդարարի նկատմամբ ժամանակավոր պաշտպանության (անգլ.՝ provisional protection) մեխանիզմներ նախատեսող կարգավորումներ, օրինակ՝ գործատուի կողմից ազդարարի դեմ ձեռնարկված որպես վնասակար գործողություններ որակվող աշխատանքից ազատելու կամ ցածր պաշտոնի փոխադրելուն ուղղված որոշման/ակտի կասեցումը մինչ գործի վարույթի ավարտը (օրինակ՝ ԵՄ հրահանգ, Ուկրաինա):
- ազդարարին հոգեւոցիալական աջակցության տրամադրման մեխանիզմներ նախատեսող կարգավորումներ (օրինակ՝ Սլովակիա, Ուկրաինա), որը ենթադրում է ազդարարների համար հանդիպումների կազմակերպում և ֆինանսավորում կարիերայի ուղղորդման մասնագետների և հոգեթերապևտների հետ:²¹

²¹ Whistleblower Protection Office of Slovakia, official website: <https://www.oznamovatelia.sk/en/chcem-oznamit/>; The Whistleblower Protection Office 2022 Annual Report, available at: <https://www.oznamovatelia.sk/wp-content/uploads/2023/06/annual-report-2022.pdf>.

II. ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մասնակից պետություններն, անհրաժեշտության դեպքում, հասանելիություն տրամադրեն հասարակության անդամներին՝ հակակոռուպցիոն մարմիններին հաղորդումներ տրամադրելու համար, այդ թվում՝ անանուն:²²

ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի (3) թիվ 2.3 հենանիշը անանուն ազդարարումների կապակցությամբ սահմանում է հետևյալ պահանջները՝

Ա. Անանուն ազդարարումները հնարավոր է ստուգել.

Բ. Անանուն եղանակով հաղորդում ներկայացնող ազդարարների ինքնության բացահայտման դեպքում ազդարարները ստանում են պաշտպանություն:²³

ԵՄ ազդարարների պաշտպանությանն ուղղված N 2019/1937 հրահանգը թողնում է անդամ պետությունների հայեցողությանը՝ որոշելու, թե արդյոք ընկերություններից և իրավասու մարմիններից պահանջվում է ընդունել անանուն ազդարարումներ և հետևել դրանց ընթացքին: Անկախ այն հանգամանքից, թե որ մոտեցումը կընդունվի անդամ պետության կողմից, այնուամենայնիվ, սահմանվում են որոշակի պահանջներ առ այն, որ անհատը, ով ազդարարել է անանուն եղանակով, սակայն հետագայում վերջինիս ինքնությունը բացահայտվել է, և վերջինիս նկատմամբ ձեռնարկվել են վնասակար գործողություններ, գտնվում է հրահանգի պաշտպանության տիրույթում:²⁴

²² UN General Assembly, United Nations Convention Against Corruption, 31 October 2003, A/58/422, Article 33, available at: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021>:

²³ OECD, Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, 2023, p. 35.

²⁴ Office of the European Union, Directive (EU) 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law, Article 6.

Հարկ է նշել, որ ԵՄ անդամ երկրների մեծամասնությունը, օրինակ՝ *Բուլղարիա, Նիդեռլանդներ, Ավստրիա, Բելգիա*, որդեգրել են այն մոտեցումը, ըստ օրի անանուն ազդարարումների ներկայացման հնարավորությունը սահմանված է օրենքով, և իրավասու մարմինները և ընկերություններն ունեն օրենքով սահմանված պարտավորություն՝ պատշաճ ընթացք տալ ներկայացված հայտերին:²⁵

ԱԳ երկրներից կրկին ուսանելի է Ուկրաինայի փորձը, որտեղ անանուն ազդարարումը նախատեսված է որպես ազդարարների պաշտպանության միջոց («Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետ): Հետևաբար, անանուն ազդարարումներ ներկայացնելու հնարավորության նախատեսումը սահմանված է որպես ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերի պահանջ («Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մաս): Արդյունքում, անանուն ազդարարի համար երաշխավորվում են ազդարարի իրավունքների պաշտպանության միևնույն երաշխիքները, որոնք կիրառվում են անձնական տվյալները ներկայացնող ազդարարների նկատմամբ պայմանով, որ վերջիններս կարող են ապացուցել, որ իրենք են հանդիսանում խնդրո առարկա ազդարարման հեղինակը: Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությանը համապատասխան օժանդակ փաստաթղթեր տրամադրելուց և գործակալության կողմից այդ փաստաթղթերի ստուգումից հետո անանուն ազդարարին շնորհվում են ազդարարի կարգավիճակ և դրանից բխող պաշտպանության միջոցներ: Բացի այդ, ազդարարումների միասնական նորաստեղծ պորտալը անանուն ազդարարներին պաշտպանություն տրամադրելու ընթացակարգը դարձրել է ավելի դյուրին՝ ազդարարներին տրամադրելով նույնականացման համար, որը կարող է օգտագործվել որպես ազդարարի կարգավիճակի ապացույց:²⁶

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում լայն տարածում է գտնում գաղտնագրված հաղորդակցման տեխնոլոգիական լուծումների կիրառումը անանուն ազդարարումներ ստանալու գործընթացում, որոնք ոչ միայն ապահովում են անվտանգության բարձր երաշխիքներ՝ ուղղված ազդարարի ինքնության և նրա ազդարարման բովանդակության նկատմամբ չարտոնված մուտքը կանխելուն և արտահոսքի կամ պատահական բացահայտումների ռիսկը նվազագույնի հասցնելուն, այլև՝ ընձեռում են ազդարարի և ազդարարումը ստացողի միջև հետադարձ կապի ապահովման հնարավորություն: ²⁷ Նման հարթակների կառավարման տեսանկյունից կարևորվում է վերջինիս հասանելիության ապահովումը

²⁵ Morrison Foerster, Implementing Laws At-a-Glance, LAST UPDATED: 27 JULY 2023, AVAILABLE AT: <https://www.mofo.com/gdpr-european-privacy/whistleblowing/whistleblower-qa>

²⁶ OECD (2022), Anti-Corruption Reforms in Ukraine: Pilot 5th Round of Monitoring Under the OECD Istanbul Anti-Corruption Action Plan, pp. 58-59.

²⁷ See for example the whistleblower software available for purchase here: G2 – Business Software Reviews, ‘Best Whistleblowing Software’, available at: <https://www.g2.com/categories/whistleblowing>:

նվազագույն թվով սուբյեկտների և որևէ երրորդ անձի հասանելիության բացառումը: Բացի այդ, եթե հարթակի տեխնիկական սպասարկումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից, ի տարբերություն պետական մասնակցությամբ ընկերության, ավելանում է առևտրային շահերով առաջնորդվելու կամ, առնվազն, նման հակման առերևույթ հնարավորության վերաբերյալ հանրային ընկալման ռիսկը, թափանցիկության առավել մեղմ չափանիշներին հետևելու ռիսկը և տեղեկատվության անվտանգության ապահովման ոլորտում առավել մեղմ պահանջներով առաջնորդվելու և առավել սակավ մասնագիտացված ռեսուրսներին տիրապետելու ռիսկը: Նշյալ ռիսկերը նվազեցնելու տեսանկյունից խորհուրդ է տրվում նման հարթակների տեխնիկական սպասարկումն իրականացնել պետական ձեռնարկությունների կողմից:

2. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Ա. ԱՆԱՆՈՒՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսվում է անանուն ազդարարումներ ներկայացնելու հնարավորություն՝ բացառապես միասնական էլեկտրոնային հարթակով մուտքագրելու միջոցով, որը փաստացի հանդիսանում է արտաքին ազդարարումների ստացման կենտրոնական մեխանիզմ, որի արդյունքում ապահովվում է ՏՀԶԿ վերոնշյալ հենանիշով սահմանված ստանդարտին համապատասխանությունը: Մինևույն ժամանակ, նշյալ կարգավորումն ունի սահմանափակող բնույթ, քանի որ օրենքով նախատեսված չէ արտաքին ազդարարումներ ներկայացնելու հնարավորություն ներքին և այլ արտաքին ազդարարման եղանակներով, ինչը չի բխում միջազգային առաջավոր պրակտիկայից, առնվազն՝ ներքին ոչ մասնավոր սուբյեկտների մասով: ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով 2019 թվականին ստացված 188 ազդարարումներից 153-ը, 2020 թվականին՝ 140 ազդարարումից 119-ը, 2021 թվականին՝ 75 ազդարարումներից 70-ը և 2022 թվականին՝ 116 ազդարարումներից 74-ը եղել են անանուն²⁸:

Բ. ԱՆԱՆՈՒՆ ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

²⁸ Ազդարարման էլեկտրոնային միասնական հարթակ (2019-2022), հասանելի է՝ <https://www.azdararir.am/am/case?content.cid=7>:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ օրենքի «Արտաքին ազդարարումը և արտաքին ազդարարման վարույթը» վերտառությամբ 7-րդ հոդվածի դրույթները տարածվում են անանուն հաղորդումների վրա այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ (*mutatis mutandis*) կիրառելի են: Սա նշանակում է, որ արտաքին ազդարարմանն առնչվող ընթացակարգերը և ազդարարների պաշտպանության միջոցները կիրառելի են նաև անանուն ազդարարումներ ներկայացված անձանց նկատմամբ՝ վերջիններիս ինքնությունը բացահայտելու պարագայում: Բացի այդ, օրենքի 11-րդ հոդվածով սահմանված է, որ անանուն հաղորդում ներկայացնելիս երաշխավորվում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը ինչպես իրավասու մարմին, այնպես էլ այլ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարը բացահայտում է իր անձնական տվյալները: Սահմանված է նաև, որ իրավասու մարմինն իրավունք չունի միջոցներ ձեռնարկելու անանուն հաղորդում ներկայացրած ազդարարի անձնական տվյալները բացահայտելու ուղղությամբ: Նշյալ կարգավորումների արդյունքում ևս ապահովվում է համապատասխանությունը ՏՀԶԿ վերոնշյալ հենանիշին:

Գ.ԱՆԱՆՈՒՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻՆ
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ազդարարի» միասնական էլեկտրոնային հարթակին հասանելիություն ունի միայն ՀՀ գլխավոր դատախազությունը: Բացի այդ, «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» 2018 թվականի ապրիլի 12-ի N 439 որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետի համաձայն՝ միասնական էլեկտրոնային հարթակը վարվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, որը, սույն կարգի 3-րդ կետի համաձայն, նշանակում է հարթակի ադմինիստրատորին:²⁹ Սույն կարգի 5-րդ մասը սահմանում է ադմինիստրատորի գործառույթները, որոնց վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջինս իրականացնում է գուտ վարչական գործունեություն:

Մինևույն ժամանակ, 07.12.2022 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվեց, որ ՄԻՊ-ն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում է

²⁹ «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության No 439 որոշում, ընդունված՝ 2018 թվականի ապրիլի 12-ին, Հավելված 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130444>:

ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա և հրապարակում ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի կայքէջում: Ընդ որում, ՄԻՊ-ի՝ հաշվետվությունը և վիճակագրությունը միասնական էլեկտրոնային հարթակում հրապարակելու լիազորությունը ծագում է միասնական էլեկտրոնային հարթակին վերջինիս հասանելիությունն ապահովելու պահից: Նշյալ օրենքի կիրարկման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը դրվեց հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում 26.05.2023 - 10.06.2023թթ. ընկած ժամանակահատվածում, որով առաջարկվում է միասնական էլեկտրոնային հարթակին ՄԻՊ-ի հասանելիության ապահովում՝ համապատասխան վիճակագրություն ներբեռնելու նպատակով:³⁰

Այս կապակցությամբ գտնում ենք, որ պետության՝ հարթակին ամբողջական ծավալով ՄԻՊ-ի հասանելիության ապահովմանն ուղղված քայլերը կարող են բացասաբար ազդել միասնական էլեկտրոնային հարթակի գաղտնիության երաշխիքների արդյունավետության և գործնական պահպանման գնահատականի նկատմամբ հանրության վստահության վրա, քանի որ տվյալ պարագայում աճում է թե՛ տեխնիկական, թե՛ մարդկային գործոնով պայմանավորված տվյալների նկատմամբ չարտոնված մուտքի, տվյալների արտահոսքի, տվյալների պատահական բացահայտումների և տվյալների գաղտնիության պահպանման մասին օրենսդրական պահանջների այլ խախտումների ռիսկը:

Դ. ԱՆԱՆՈՒՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ
ԱՊԱՀՈՎՈՒՄ

Գրասենյակային վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ հարթակի ծրագրային ապահովումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից:³¹ Այս կապակցությամբ գտնում ենք, որ նշյալը

³⁰ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, շրջանառվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, քննարկվել է 26.05.2023 - 10.06.2023թթ.-ին, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/5788>:

³¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարության և «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի մայիսի 27-ին կնքված «Պետության կարիքների համար համակարգչային ծառայությունների մատուցման» պետական գնման N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-20/13 պայմանագիրը, հասանելի է՝ <https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=0bbf12e1-134e-4ddc-88b8-106e019023fe>:

կարող է բացասաբար ազդել ազդարարման հարթակի վստահելիության վրա, քանի որ, ինչպես վերը նշվեց, մասնավոր ընկերության պարագայում ավելանում է առևտրային շահերով առաջնորդվելու կամ, առնվազն, նման հակման առերևույթ հնարավորության վերաբերյալ հանրային ընկալման ռիսկը, թափանցիկության առավել մեղմ չափանիշներին հետևելու ռիսկը և տեղեկատվության անվտանգության ապահովման ոլորտում առավել մեղմ պահանջներով առաջնորդվելու և առավել սակավ մասնագիտացված ռեսուրսներին տիրապետելու ռիսկը:

Մինևույն ժամանակ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նախագծում, որպես ազդարարման համակարգի հիմնախնդիր, կարևորվել է հանրության շրջանում վստահության մակարդակի բարձրացումը՝ ամրագրելով քաղաքացիների վստահության ապահովումը որպես ազդարարման համակարգի վերջնական նպատակը, իսկ Ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծի «Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը» թիվ 2.22 գործողության ներքո նախատեսվել է միասնական էլեկտրոնային հարթակի անվտանգության լրացուցիչ երաշխիքների սահմանումը:³²

III. ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՏԱՆԴԱՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

Միջազգային պրակտիկայում տարբերակվում են ազդարարների խրախուսման մեխանիզմների երկու տեսակներ՝ դրամական պարգևատրումներ (անգլ.՝ reward) և պատվո շքանշաններ/ պատվոգրեր (անգլ.՝ honours): Բացի այդ, դրամական պարգևատրման մեխանիզմների շրջանակներում տարբերակվում է նաև առանձին ենթատեսակ՝ *qui tam* հայեցակարգը: Այժմ ուսումնասիրենք դրանցից յուրաքանչյուրը:

Ա. ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

Որոշ երկրներում հակակոռուպցիոն գործակալությունները և այլ մարմիններն իրավասու են դրամական պարգևատրումներ շնորհել ազդարարներին՝ ազդարարումը խրախուսելու նպատակով:

«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ի 80% բաժնեմասնակցությունը պատկանում է ֆիզիկական անձի: Իրական շահառուի հայտարարագիր, հասանելի է՝ <https://www.e-register.am/en/companies/1194172/declaration/b5a48f48-a7a2-4867-9492-f170644ccada>:

³² «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Տարիներ ի վեր ազդարարումների համար պարզևատրումներ նախատեսող կարգավորումների առավելություններն ու թերությունները հանդիսացել են բանավեճի առարկա: Մինևույն ժամանակ, պարզևատրում նախատեսող կարգավորումների առնչությամբ նախանշվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

- Պարզևատրում ստանալու առաջին նախապայմանը ազդարարների կողմից հանրային շահով առաջնորդվելու շարժառիթն է, իսկ այն պետություններում, որտեղ թույլատրվում է ազդարարել՝ առաջնորդվելով մասնավոր շահով, ազդարարները, որպես կանոն, իրավասու չեն պարզևատրման համար:
- Պարզևատրում ստանալու երկրորդ նախապայմանը ազդարարման արդյունքում իրավախախտի նկատմամբ դրական ելքով ավարտված վարույթներն են, որի արդյունքում հանրային բյուջե վերադարձվում է գումար:
- Ազդարարին տրամադրվող պարզևատրումը, որպես կանոն, լինում է օրենքով նախապես սահմանված չափով տոկոսային հարաբերակցությամբ մեջ հանրային բյուջե վերադարձված գումարից, որպես կանոն, 10-30%-ի չափով:³³

ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի և ԵՄ N 2019/1937 հրահանգով ազդարարների պաշտպանությանն ուղղված ստանդարտները ցուցաբերում են զգուշավոր մոտեցում՝ չնախատեսելով ազդարարների խրախուսման մեխանիզմների սահմանման պահանջ: Մինևույն ժամանակ, թե ԵՄ անդամ, թե՛ այլ պետությունների կողմից վերջին տարիներին նկատվում է միտում՝ ազդարարների համար դրամական խրախուսման մեխանիզմներ նախատեսող մոդելին անցում կատարելու ուղղությամբ: Այսպես.

Մլուվակիայի ազդարարների պաշտպանության մասին օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ Ազդարարների պաշտպանության գրասենյակը կարող է ազդարարին շնորհել նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով պարզևատրում օրենքով նախատեսված որոշակի պայմաններին համապատասխան ազդարարում ներկայացնելու պարագայում: Օրինակ, պարզևատրման պահանջ կարող է ներկայացվել այնպիսի գործերով, որոնց բացահայտմանը և հետաքննությանը նպաստել է ազդարարը, եթե քրեական վարույթի արդյունքում ներկայացվել է մեղադրական եզրակացություն, կամ եթե վարչական վարույթի արդյունքում կայացվել է վերջնական որոշում: Օրենքը նաև սահմանում է, որ ազդարարն ավտոմատ կերպով պարզևատրման իրավունք չունի, և Գրասենյակը կարող է ազդարարին

³³ Տե՛ս, օրինակ, PILON, Guiding Principles for Protecting Whistleblowers and Encouraging Protected Disclosures, 2017, p. 5, available at: <https://pilonsec.org/digital-library/corruption-resources/>:

պարզևատրման տրամադրման հարցը որոշել՝ բոլոր չափանիշների գնահատման արդյունքում՝ հանգելով նաև բացասական եզրակացության: Այդ չափանիշները ներառում են՝

- ազդարարի վաստակի աստիճանը հանրության համար վնասակար լուրջ իրավախախտման պարզաբանման գործում,
- ազդարարի վաստակի աստիճանը դրա հեղինակի բացահայտման գործում,
- ազդարարի եկամտի կորստի չափը՝ հաշվելի լինելու պարագայում,
- պահպանված կամ վերականգնված ակտիվների չափը՝ հաշվելի լինելու պարագայում:

Բացի այդ, պարզևատրման հարցի վերաբերյալ Գրասենյակի որոշումը ենթակա չէ բողոքարկման դատական կարգով:

Լիտվայի ազդարարների պաշտպանության մասին օրենքի 12-րդ հոդվածը նախատեսում է, որ ազդարարները, ովքեր արժեքավոր տեղեկատվություն են տրամադրել իրավասու մարմնին, կարող են ստանալ պարզևատրում Կառավարության կողմից սահմանված կարգով: Ազդարարին արժեքավոր տեղեկատվության դիմաց պարզևատրման մասին որոշումը կայացվում է, պարզևատրումը հաշվարկվում և վճարվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- ազդարարը կարող է պարզևատրում ստանալ ցանկացած խախտման մասին տեղեկատվության համար՝ անկախ խախտման տեսակից կամ բնույթից.
- ազդարարի առավելագույն պարզևատրման շեմ սահմանված չէ.
- ազդարարի պարզևատրումը փոխկապակցված չէ դատարանի վավեր որոշման հետ:

Բացի այդ, սահմանված է, որ ազդարարի կողմից պարզևատրում ստանալու պարագայում վերջինս իրավասու չէ ստանալ կրած վնասների համար փոխհատուցում:³⁴

Հունգարիայում ազդարարների պարզևատրման մեխանիզմները սահմանափակվում են բացառապես մրցակցության ոլորտում: Հունգարիայի մրցակցության մասին օրենքում 2010 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում ազդարարները, ովքեր «անփոխարինելի» տեղեկատվություն են տրամադրում անօրինական կարտելների մասին, կարող են ստանալ պարզևատրում Հունգարիայի մրցակցային մարմնի կողմից: Մինևույն ժամանակ, ազդարարների պարզևատրումները սահմանափակվում են սահմանված տուգանքի 1%-ով, առավելագույնը՝ շուրջ 180,000 ԱՄՆ դոլարի

³⁴ Law on the Protection of Whistleblowers No. XIII-804, adopted: December 16, 2021, Article 5, available at: <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAP/ad4bf270487211eca8a1caec3ec4b244>

չափով: Արդյունքում, նման ցածր շեմով պայմանավորված՝ վերջինս չի ծառայել իր առջև դրված՝ ազդարարներին խրախուսելու նպատակին:³⁵

Ուկրաինայում օրենսդրական փոփոխությունների արդյունքում ևս նախատեսվել է կոռուպցիոն բացահայտումների համար պարգևատրման վճարում: Կոռուպցիայի վերաբերյալ հաղորդում ներկայացրած ազդարարն ունի պարգևատրման իրավունք, եթե կոռուպցիոն հանցագործությունից ստացված ապօրինի եկամուտները և պետության կրած վնասը հինգ հազար անգամ ավելի են, քան Ուկրաինայի չհարկված նվազագույն աշխատավարձը (այն է՝ շուրջ 945,000 ԱՄՆ դոլար): Այս դեպքում պարգևատրման չափը կարող է կազմել հանցագործությունից ստացված հասույթի կամ դրա հետևանքով պատճառված վնասի մինչև 10 տոկոսը, սակայն այն չի կարող գերազանցել Ուկրաինայի նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը (շուրջ 570,000 ԱՄՆ դոլար): Պարգևատրումը, սակայն, չի տրամադրվում այն դեպքում, երբ ազդարարը բացահայտում է տեղեկատվությունը համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի (անգլ.՝ plea agreement) շրջանակներում, հանցակից է այն հանցագործությանը, որի մասին նա բացահայտում է տեղեկատվություն կամ ունի իր մասնագիտական գործառնություններից (պարտականություններից) բխող իրավախախտման մասին զեկուցելու պարտավորություն: Միննույն ժամանակ, գործող իրավակարգավորումների համաձայն՝ ազդարարին պարգևատրում տրամադրելու վերաբերյալ որոշ դրույթներ խնդրահարույց են: Մասնավորապես, օրենքի համաձայն նման պարգևատրումը տրամադրվում է դատարանի կողմից մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ պետական բյուջեի հաշվին՝ Պետական գանձապետարանի կողմից: Սակայն, օրենքով հստակ սահմանված չէ այն հանգամանքը, թե արդյոք հանցագործությամբ պատճառված վնասները պետք է փոխհատուցված լինեն պարգևատրման վճարման պահին: Սա նշանակում է, որ օրենքի գործող տարբերակի համաձայն՝ ազդարարը կարող է պետական բյուջեից անմիջապես պարգևատրում ստանալ, նույնիսկ եթե հանցագործության արդյունքում գողացված պետական ակտիվները պետական

³⁵ TI Anti-Corruption Helpdesk, Whistleblower Reward Programmes, 2018, p. 11, available at: <https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/Whistleblower-Reward-Programmes-2018.pdf>, referring to Hungarian Competition Act, Article 79/A (1) and (3).

բյուջե չվերադարձվեն:³⁶ Միևնույն ժամանակ, պարզևատրման հնարավորություն սահմանված չէ անանուն ազդարարումների պարագայում:³⁷

Ամերիկայի Միացյալ Նահանգներում (այսուհետ՝ ԱՄՆ) Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովը տրամադրում է ֆինանսական պարզևատրում 2010 թվականի Դոդ-Ֆրանկ ակտով սահմանված արժեթղթերի օրենքի խախտման վերաբերյալ տեղեկատվության դիմաց: Պարզևատրման չափը որոշվում է ազդարարի տրամադրած տեղեկատվության հիման վրա հարուցված վարույթի արդյունքում՝ կախված Հանձնաժողովի կողմից հավաքագրված գումարի չափից և տեղեկատվության որակից: Հանձնաժողովի ծրագրի համաձայն՝ ազդարարներն իրավունք ունեն ստանալ Հանձնաժողովի և այլ կարգավորող և իրավապահ մարմինների կողմից կողմից հարուցված վարույթների շրջանակներում կիրառված դրամական պատժամիջոցների արդյունքում հավաքագրված գումարների 10-30 տոկոսը: Միևնույն ժամանակ, պարզևատրումը տրամադրվում է այն պարագայում, երբ ազդարարի տրամադրած տեղեկատվության հիման վրա հանձնաժողովի կողմից հարուցված վարույթը հանգեցնում է 1 միլիոն ԱՄՆ դոլարի չափը գերազանցող դրամական պատժամիջոցների: Հանձնաժողովի պարզևատրման մեխանիզմը կիրառելի է նաև ԱՄՆ քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ: Օրինակ, 2014 թվականի սեպտեմբերին այս մեխանիզմի միջոցով մի ազդարարի շնորհիվ է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլարի չափով պարզևատրում:³⁸

Բացի նշյալ երկրներից, ազդարարների պարզևատրման մեխանիզմներ են նախատեսված Մեծ Բրիտանիայում, Բրազիլիայում, Կանադայում, Պերուում, Թայվանում, Պակիստանում,³⁹ Հարավային

³⁶ Anti-Corruption Portal HSE University, Corruption Whistleblower Law Enters into Force in Ukraine, 2020, referring to the Law n. 198-IX of October 17, 2019 On Amendments to the Law of Ukraine on Preventing Corruption with Regard to Corruption Whistleblowers, entered into force in Ukraine on Jan. 1, 2020, available at: https://anticor.hse.ru/en/main/news_page/corruption_whistleblower_law_enters_into_force_in_ukraine.

³⁷ NACP, On September 6, the NACP launches the Unified Whistleblower Reporting Portal, 2023, available at: <https://nazk.gov.ua/en/news/on-september-6-the-nacp-launches-the-unified-whistleblower-reporting-portal/>.

³⁸ UNODC, The United Nations Convention against Corruption: Resource Guide on Good Practices in the Protection of Reporting Persons, 2015, p. 67, available at: https://www.unodc.org/documents/corruption/Publications/2015/15-04741_Person_Guide_eBook.pdf, referring to US Securities and Exchange Commission, 2014 Annual Report to Congress on the Dodd-Frank Whistleblower Program, available at: <http://www.sec.gov/about/offices/owb/annual-report-2014.pdf>

³⁹ NorthWhistle, How Is Whistleblower Protection Enforced in The EU?, available at: <https://www.northwhistle.com/how-is-whistleblower-protection-enforced-in-the-eu/>

Կորեայում, Մալազիայում, Ջամբիայում,⁴⁰ Մոնտենեգրոյում, Բրազիլիայում, Ֆիլիպիններում, Վիետնամում,⁴¹ Նիգերիայում, Գանայում և Քենիայում:⁴²

Բ. «QUI TAM» ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

«Qui tam» օրենսդրությունը ներկայացնում է ազդարարման օրենքի առանձին ճյուղ, որը մասնավորապես, կիրառվում է ԱՄՆ-ում: Այս մոդելը տարբերվում է դասական պարզևատրման համակարգերից նրանով, որ վերջիններս, դրամական պարզևատրում տրամադրելով տեղեկատվության համար, ազդարարին թողնում են պասիվ դիտորդի դերում:⁴³

ԱՄՆ Կեդծ բողոքների ակտը (անգլ.՝ False Claims Act) հանդիսանում է աշխարհի ամենահաջողված ազդարարման օրենքներից մեկը: Թեև դրա շրջանակը սահմանափակված է պետական պայմանագրերի հետ կապված խարդախությամբ և կոռուպցիայով, այն օրենքի հազվագյուտ օրինակներից է, որը ռեսուրսներն ուղղակիորեն դնում է անհատների ձեռքում, որոնք այնուհետև կարող են նախաձեռնել քաղաքացիական հայցի ներկայացում՝ ընդդեմ իրավախախտների: Այս տեսակի վարույթներում մասնավոր կողմը, որը կոչվում է «realtor», հայց է ներկայացնում Կառավարության անունից: Եթե Կառավարությունը վերահսկողության տակ է վերցնում գործողությունը, անհատը ստանում է պարզևատրում՝ ցանկացած բռնագանձված գումարի 15-20 տոկոսի չափով, իսկ եթե՝ միայնակ է գործում, ապա՝ ընդհուպ մինչև 25-30 տոկոսի չափով: Երկու դեպքում էլ անհատը պատասխանատու է իր իրավաբանական վճարների համար:⁴⁴ 1986-ից 2020 թվականների ընթացքում ազդարարների գործերը նշյալ օրենքի շրջանակներում հանգեցրել են տույժերի՝ 46,5 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր

⁴⁰ UNODC, The United Nations Convention against Corruption: Resource Guide on Good Practices in the Protection of Reporting Persons, 2015, pp. 67-68.

⁴¹ Whistleblower Network News, Rewards on a Roll: More Countries Worldwide Now Offering Whistleblower Incentives, 2020, available at: <https://whistleblowersblog.org/features/rewards-on-a-roll-more-countries-worldwide-now-offering-whistleblower-incentives/>;

⁴² The Global Anticorruption Blog, When and Why Do Whistleblower Reward Programs Succeed?, 2023, available at: <https://globalanticorruptionblog.com/2023/01/13/when-and-why-do-whistleblower-reward-programs-succeed/>

⁴³ Hutton, David (2011). Shooting the Messenger. Canada: Parkland Institute, available at: http://parklandinstitute.ca/research/summary/shooting_the_messenger.

⁴⁴ Vaughn, R. (2012). The Successes and Failures of Whistleblower Laws. Edward Elgar Publishing: United States, page 131.

արժողությամբ, իսկ ազդարարները ստացել են պարգևատրումներ՝ 7,8 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ:⁴⁵

Գ. ՊԱՏՎՈ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ/ ՊԱՏՎՈԳՐԵՐ

Միջազգային պրակտիկայում տեղ է գտել նաև այն մոտեցումը, որի համաձայն կառավարությունները շնորհում են պատվո շքանշաններ/ պատվոգրեր հանրային շահերով առաջնորդվող ազդարարներին, որոնց գործողությունները զգալիորեն նպաստում են երկրի ընդհանուր բարօրությանը: Բացի այդ, որոշ դատարաններ և իրավապահ մարմիններ նաև պատվո շքանշաններ/ պատվոգրեր են տրամադրում այն անձանց, ովքեր իրենց վտանգի տակ են դնում այլոց շահերը պաշտպանելու կամ այլոց շահերին ծառայելու համար: Նշյալ անձանց շրջանակում ներառվում են ապօրինի գործողությունների, կոռուպցիայի կամ դրա սպառնալիքի մասին հաղորդում ներկայացրած ազդարարները: Նման ճանաչումը նպաստում է «օրինապաշտ քաղաքացիության» (անգլ.՝ good citizenship) գաղափարի տարածմանը: Ինդոնեզիայի օրենսդրությունը, օրինակ, «երախտագիտության շքանշաններ» է շնորհում ազդարարներին, ովքեր աջակցել են կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ջանքերին:⁴⁶ Մեկ այլ օրինակ է, երբ Միացյալ Թագավորությունում բուժքույրը, ով ազդարարել էր հիվանդանոցում հիվանդների խնամքի կարևոր խնդիրների վերաբերյալ, և երիտասարդական աշխատողը, ով բացահայտել էր երեխաների սեռական բռնության սկանդալը, երկուսն էլ արժանացել են պատվո նշանների թագուհի Եղիսաբեթ II-ի կողմից:⁴⁷

2. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում գործող կարգավորումների համաձայն ազդարարների խրախուսման մեխանիզմներ առկա չեն: Միննույն ժամանակ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների

⁴⁵ The Global Anticorruption Blog, When and Why Do Whistleblower Reward Programs Succeed?, 2023[]

⁴⁶ Law No. 31 of 1999 on the Eradication of the Criminal Act of Corruption, article 42, available at: <http://www.flevin.com/id/lgso/translations/Laws/Law%20No.%2031%20of%201999%20on%20Corruption%20Eradication.pdf>.

⁴⁷ Stafford Hospital Whistleblower Helene Donnelly Collects OBE, BBC News, 1 May 2014, available at: <https://www.bbc.com/news/uk-england-stoke-staffordshire-27244206> and Rotherham whistleblower Jayne Senior appointed MBE, BBC News, 10 June 2016, available at: <https://www.bbc.com/news/uk-england-south-yorkshire-36498226>.

գործողությունների ծրագրի նախագծի «(...) Դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը» թիվ 2.23 գործողությամբ որպես ոլորտային հիմնախնդիր հատկորոշված է ազդարարման խրախուսմանն ուղղված որևէ կառուցակարգի բացակայությունը:⁴⁸

⁴⁸ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի դեմ պայքարում ազդարարների ներգրավման տեսանկյունից խիստ կարևորվում է ազդարարների պաշտպանությանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրումը: Միջազգային հանրության կողմից այդ նպատակով մշակված՝ ազդարարների պաշտպանության երաշխիքների հիմնական ստանդարտները ներառում են ազդարարների իրավունքների պաշտպանությանն առնչվող վարույթներում ապացուցման բեռի բաշխման առանձնահատկությունները, ազդարարի ինքնությունը չբացահայտելը, ազդարարի անձնական անվտանգության պաշտպանությունը, ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատելը, պաշտպանությունն աշխատավայրում վնասակար գործողությունների բոլոր ձևերից և կրած վնասների փոխհատուցումը և վերականգնումը, ազդարարին խորհրդատվության և իրավաբանական և հոգեւոցիալական աջակցության տրամադրումը:

ՀՀ-ում վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներդրվել են նշյալ մեխանիզմներից որոշները՝ ամբողջ ծավալով և որոշները՝ մասնակի, կամ՝ ընդհանրապես չեն ներդրվել: ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ ստանդարտներին ապացուցման բեռի բաշխման առանձնահատկությունների, ազդարարի ինքնությունը չբացահայտելու, աշխատավայրում վնասակար գործողությունների բոլոր ձևերից պաշտպանության, ազդարարին խորհրդատվության և իրավաբանական աջակցության տրամադրման կարգավորումների մասով: Խնդրահարույց են՝

- ազդարարի անվտանգության պաշտպանության կարգավորումները, քանի որ հատուկ պաշտպանությունը, առնվազն ՄԻՊ-ի դիմումի հիման վրա, սահմանափակվում է քրեական հարթությունում, ինչպես նաև թե՛ արտաքին ազդարարումներ, թե՛ ազդարարների հատուկ պաշտպանության դիմումներ ստացող *«իրավասու մարմին»* եզրույթի ընդհանրական սահմանումը,
- ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ կարգավորումները, քանի որ դրանք բացառում են ազդարարման պաշտպանությունը գաղտնի տեղեկատվության արգելված օգտագործման պարագայում,
- ազդարարներին պատճառված վնասի համար ֆինանսական փոխհատուցման տրամադրման կարգավորումները, քանի որ բացակայում են վերջինիս հստակ և միանշանակորեն ամրագրված հնարավորությունը, տրամադրման կարգն ու պայմանները,
- ազդարարի խախտված աշխատանքային իրավունքների վերականգնման հնարավորության կարգավորումները, քանի որ գործող կարգավորումներն ունեն

սահմանափակող բնույթ և չեն կարող տարածվել այն իրավիճակների վրա, երբ աշխատանքի դադարեցումը ձևական տեսանկյունից իրականացվել է օրենքով սահմանված հիմքերով և կարգով, սակայն՝ վրեժխնդրության շարժառիթով,

Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն միջազգային, մասնավորապես՝ ԵՄ պրակտիկայում հայտնի ազդարարների հավելյալ պաշտպանության հետևյալ երաշխիքները՝

- ազդարարման արդյունքում ազդարարի նկատմամբ՝ նախքան որպես պոտենցիալ վնասակար գործողություն որակվող աշխատանքային ակտ ընդունելը ազդարարների պաշտպանությամբ զբաղվող կենտրոնական մարմնի հաստատումը ստանալու պահանջ նախատեսող կարգավորումներ (Սլովակիա).
- ազդարարման արդյունքում ազդարարի նկատմամբ՝ որպես պոտենցիալ վնասակար գործողություն որակվող պատասխանատվության միջոց կիրառելու նպատակով կարգապահական ժողովի անցկացման հրապարակայնության և թափանցիկության կարգավորումներ, որոնք ներառում են՝ ազդարարի պահանջով ժողովի անցկացման մասին հայտարարության տեղադրում պաշտոնական կայքում՝ ժողովի կայացումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ, ժողովին մամուլի, արհմիության, մասնագիտական ասոցիացիայի կամ աշխատողների ներկայացուցիչներին հրավիրում, իսկ նշյալ պահանջները չպահպանելու դեպքում՝ ազդարարի դեմ կայացված ակտի առոչինչ բնույթի սահմանում (Ռումինիա).
- ազդարարի նկատմամբ ժամանակավոր պաշտպանության (անգլ.՝ provisional protection) մեխանիզմներ նախատեսող կարգավորումներ, օրինակ՝ գործատուի կողմից ազդարարի դեմ ձեռնարկված որպես վնասակար գործողություններ որակվող աշխատանքից ազատելու կամ ցածր պաշտոնի փոխադրելուն ուղղված որոշման/ակտի կասեցումը մինչ գործի վարույթի ավարտը (օրինակ՝ ԵՄ հրահանգ, Ուկրաինա):
- ազդարարին հոգեւոցիալական աջակցության տրամադրման մեխանիզմներ նախատեսող կարգավորումներ (օրինակ՝ Սլովակիա, Ուկրաինա), որը ենթադրում է ազդարարների համար հանդիպումների կազմակերպում և ֆինանսավորում կարիերայի ուղղորդման մասնագետների և հոգեթերապևտների հետ:
- ազդարարների պաշտպանությամբ զբաղվող կենտրոնական մարմնի կողմից անկախ խորհրդականի կարգավիճակով ազդարարներին առնչվող դատական վարույթներում մասնակցություն նախատեսող կարգավորումներ:

Բացի այդ, գործնականում նշյալ պաշտպանության երաշխիքների մեծամասնությունը չի կատարվում, ինչը վկայում է հանրության շրջանում ազդարարման ինստիտուտի նկատմամբ վստահության ցածր մակարդակի մասին:

Անանուն ազդարարումներ ներկայացնելու և դրանք ստուգելու հնարավորության և անանուն ազդարարների անձի բացահայտման պարագայում վերջիններիս պաշտպանության միջոցների տրամադրման կարգավորումներն ընդհանուր առմամբ համապատասխանում են միջազգային ստանդարտներին: Միևնույն ժամանակ, անանուն ազդարարումներ ներկայացնելու հնարավորությունը սահմանված է միայն ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով, որի արդյունքում նման հնարավորություն նախատեսված չէ ներքին և արտաքին այլ խողովակներով ազդարարելու համար:

Բացի այդ, նման հարթակների անվտանգության երաշխիքների տեսանկյունից կարևորվում է վերջինիս հասանելիության ապահովումը նվազագույն թվով սուբյեկտների և որևէ երրորդ անձի հասանելիության բացառումը՝ ուղղված ազդարարի ինքնության և նրա ազդարարման բովանդակության նկատմամբ չարտոնված մուտքը կանխելուն և արտահոսքի կամ պատահական բացահայտումների ռիսկը նվազագույնի հասցնելուն, ինչպես նաև հարթակի ծրագրային սպասարկման իրականացումը պետական մասնակցությամբ ընկերության կողմից՝ նվազեցնելու առևտրային շահերով, թափանցիկության և տեղեկատվության անվտանգության առավել մեղմ ստանդարտներով առաջնորդվելու ռիսկը: Մինչդեռ, ի հեճուկս գործող՝ հարթակին բացառապես ՀՀ գլխավոր դատախազության կողմից հասանելիության նախատեսման կարգավորումների, նախագծերի մակարդակով առաջարկվում է հարթակի հասանելիության ընդլայնում՝ ներառելով նաև ՄԻՊ-ին: Բացի այդ, ՀՀ-ում հարթակի ծրագրային ապահովումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից, իսկ թե՛ գործող կառուցակարգերի, թե՛ առաջարկվող փոփոխությունների շրջանակներում այս կապակցությամբ որևէ փոփոխություն չի նախատեսվում:

Միջազգային պրակտիկայում տարբերակվում են ազդարարների խրախուսման մեխանիզմների երկու տեսակներ՝ դրամական պարգևատրումներ (անգլ.՝ reward) և պատվո շքանշաններ/ պատվոգրեր (անգլ.՝ honours): Պարգևատրում նախատեսող կարգավորումների առնչությամբ նախանշված հիմնական նախապայմանները ներառում են ազդարարների կողմից հանրային շահով առաջնորդվելու շարժառիթը և ազդարարման արդյունքում իրավախախտի նկատմամբ մեղադրական դատավճռով ավարտված վարույթների արդյունքում հանրային բյուջե գումարների վերադարձման փաստը, որից բխում է ազդարարին տրամադրվող պարգևատրման տոկոսային հարաբերակցությունը՝ որպես կանոն 10-30%-ի չափով: Ամեն դեպքում պարգևատրման տրամադրման որոշման կայացման չափանիշները ներառում են՝ ազդարարի վաստակի աստիճանը հանրության համար վնասակար լուրջ իրավախախտման պարգաբանման և դրա հեղինակի բացահայտման գործում, ազդարարի պարգևատրման համաչափությունը խախտման հետևանքով պատճառված վնասին կամ դրա սպառնալիքին՝ հաշվելի լինելու պարագայում և այլն: Դրամական պարգևատրման մեխանիզմների շրջանակներում

տարբերակվում է նաև առանձին ենթատեսակ՝ *qui tam* հայեցակարգը, որը կիրառվում է մասնավորապես, ԱՄՆ-ում և ենթադրում է քաղաքացիների կողմից, սակայն՝ կառավարության անունից, քաղաքացիական հայցի ներկայացում՝ ընդդեմ իրավախախտների և հաջողելու դեպքում՝ պարգևատրման ստացում: ՀՀ-ում գործող կարգավորումների համաձայն ազդարարների խրախուսման կառուցակարգեր առկա չեն, սակայն վերջիններիս բացակայությունը և ներդրման անհրաժեշտությունը հատկորոշված է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծում:

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

- Ազդարարի անվտանգության պաշտպանության կարգավորումների վերանայում՝ հատուկ պաշտպանությունը տարածելով նաև այն ազդարարների շրջանակի վրա, որոնք ազդարարում են վարչական կամ կարգապահական կոռուպցիոն իրավախախտման վերաբերյալ, ինչպես նաև՝ սահմանելով ազդարարների հատուկ պաշտպանության դիմումներ ստացող «*իրավասու մարմին*» եզրույթը:
- Ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ կարգավորումների վերանայում՝ ներառելով ազդարարման պաշտպանությունը գաղտնի տեղեկատվության արգելված օգտագործման պարագայում:
- Ազդարարներին պատճառված վնասի համար ֆինանսական փոխհատուցման տրամադրման հնարավորության սահմանում օրենքում՝ նախատեսելով վերջինիս տրամադրման կարգն ու պայմանները:
- Ազդարարի խախտված աշխատանքային իրավունքների վերականգնման հնարավորության սահմանում ՀՀ աշխատանքային օրենսգրքով:
- Ազդարարման արդյունքում ազդարարի նկատմամբ՝ նախքան որպես պոտենցիալ վնասակար գործողություն որակվող աշխատանքային ակտ ընդունելը ազդարարների պաշտպանությամբ զբաղվող կենտրոնական մարմնի հաստատումը ստանալու պահանջի նախատեսում:
- Ազդարարման արդյունքում ազդարարի նկատմամբ՝ որպես պոտենցիալ վնասակար գործողություն որակվող պատասխանատվության միջոց կիրառելու նպատակով կարգապահական ժողովի անցկացման հրապարակայնության և թափանցիկության կարգավորումների նախատեսում, որոնք ներառում են՝ ազդարարի պահանջով ժողովի անցկացման մասին հայտարարության տեղադրում պաշտոնական կայքում՝ ժողովի կայացումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ, ժողովին մամուլի, արհմիության, մասնագիտական ասոցիացիայի կամ աշխատողների ներկայացուցիչներին հրավիրում, իսկ նշյալ պահանջները չպահպանելու դեպքում՝ ազդարարի դեմ կայացված ակտի առոչինչ բնույթի սահմանում:
- Ազդարարի նկատմամբ ժամանակավոր պաշտպանության (անգլ.՝ provisional protection) մեխանիզմների նախատեսում, օրինակ՝ գործատուի կողմից ազդարարի դեմ ձեռնարկված

որպես վնասակար գործողություններ որակվող աշխատանքից ազատելու կամ ցածր պաշտոնի փոխադրելուն ուղղված որոշման/ակտի կասեցումը մինչ գործի վարույթի ավարտը:

- Ազդարարին հոգեւոցիալական աջակցության տրամադրման մեխանիզմների նախատեսում, որը ենթադրում է ազդարարների համար հանդիպումների կազմակերպում և ֆինանսավորում կարիերայի ուղղորդման մասնագետների և հոգեթերապևտների հետ:
- Ազդարարների պաշտպանությամբ զբաղվող կենտրոնական մարմնի կողմից անկախ խորհրդականի կարգավիճակով ազդարարներին առնչվող դատական վարույթներում մասնակցության գործառույթի/լիազորության նախատեսում:

ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

- Անանուն ազդարարումներ ներկայացնելու հնարավորության և դրանք ստուգելու պարտավորության պահանջի նախատեսում ներքին և արտաքին այլ խողովակներով ազդարարելու պարագայում:
- Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի անվտանգության լրացուցիչ երաշխիքների սահմանման շրջանակներում դիտարկել հարթակի ծրագրային ապահովման իրականացումը մասնավոր ընկերության կողմից «Ekeng» էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին հանձնելը:
- Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին շարունակել ապահովել բացառապես ՀՀ գլխավոր դատախազության հասանելիությունը, կամ, որպես այլընտրանքային տարբերակ, էլեկտրոնային հարթակին ՄԻՊ-ի հասանելիությունը ապահովել սահմանափակ՝ բացառապես վիճակագրության ներբեռնման ծավալով:

ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

- Ազդարարների դրամական պարգևատրման տեսքով խրախուսման մեխանիզմների ներդրում:
- Ազդարարների կողմից հանրային շահով առաջնորդվելու շարժառիթը որպես դրամական պարգևատրման տրամադրման նախապայմանի սահմանում:
- Ազդարարման արդյունքում իրավախախտի նկատմամբ մեղադրական դատավճռով ավարտված վարույթների արդյունքում հանրային բյուջե գումարների վերադարձման փաստը՝ որպես դրամական պարգևատրման տրամադրման նախապայմանի սահմանում:

- Ազդարարին տրամադրվող պարգևատրման չափի փոխկապակցում՝ հանրային բյուջե վերադարձված գումարների հետ՝ տոկոսային հարաբերակցության հստակ շեմի սահմանման (օրինակ՝ 20%-ի) չափով:
- Ազդարարին պարգևատրման տրամադրման որոշման կայացման գնահատման համակարգի և չափանիշների սահմանում, որոնք կարող են ներառել՝ ազդարարի վաստակի աստիճանը հանրության համար վնասակար լուրջ իրավախախտման պարզաբանման և դրա հեղինակի բացահայտման գործում, ազդարարի պարգևատրման համաչափությունը խախտման հետևանքով պատճառված վնասին կամ դրա սպառնալիքին՝ հաշվելի լինելու պարագայում և այլն: